ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 հունիսի 2020թ. թիվ 458-Ա

ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԱՐՑԵՐՈՎ ԶԲԱՂՎՈՂ ՄՇՏԱԿԱՆ
ԳՈՐԾՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՀՀ ԼՈՌՈՒ
ՄԱՐԶՊԵՏԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 3-Ի ԹԻՎ 491
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով և «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի սեպտեմբերի 19-ի « Հայաստանի Հանրապետությունում գենդերային քաղաքականության իրականացման 2019-2023 թվականների ռազմավարությունը և միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» թիվ 1334-Լ որոշումը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 1334-Լ որոշմամբ նախատեսված միջոցառումների ծրագրում ներառված միջոցառումների իրականացումն ապահովելու նպատակով Լոռու մարզպետարանում ստեղծել գենդերային հարցերով զբաղվող մշտական գործող հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2019թ. հոկտեմբերի 3-ի թիվ 491 կարգադրությունը:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Invalid signature

X

ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆ

Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ

2020թ. հունիսի 18
ք.Վանաձոր

Հավելված.
ՀՀ Լոռու մարզպետի
2020թ. հունիսի 18-ի
թիվ 458-Ա որոշման

Կ Ա Զ Մ
Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանում գենդերային հարցերով զբաղվող մշտական գործող հանձնաժողովի

Ս. Գրիգորյան - հանձնաժողովի նախագահ, ՀՀ Լոռու մարզպետարանի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետ

Ն.Համբարձումյան - հանձնաժողովի քարտուղար, մարզպետարանի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի գլխավոր մասնագետ

Հանձնաժողովի անդամներ.

Լ.Վարդանյան - մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առողջապահության բաժնի պետ

Հ.Գասպարյան - մարզպետարանի զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի պետ

Ա.Մատինյան - մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի տեղակալ

Լ. Քոչարյան - մարզպետարանի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության ՀԳՄՏՍ գործունեության համակարգման բաժնի ավագ մասնագետ

Ա.Ավետյան - Վանաձորի Սոցիալական աջակցության տարածքային բաժնի պետ /համաձայնությամբ/

Ա.Նազարյան - ՀՀ ՈԼՄՎ Վանաձոր քաղաքի Բազումի բաժնի Անչափահասների գործերով և ընտանիքում բռնության կանխարգելման բաժանմունքի ավագ տեսուչ, ոստիկանության մայոր /համաձայնությամբ/

Ն.Հովհաննիսյան - Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի Լոռու մասնաճյուղի նախագահ /համաձայնությամբ/

Ա.Զալինյան - «Փոքրիկ իշխան» ցերեկային խնամքի կենտրոնի սոցիալական աշխատող /համաձայնությամբ/

Ա.Մարտիրոսյան - «Վորլդ Վիժն Հայաստան» Լոռու մարզի ծրագրերի ղեկավար /համաձայնությամբ/

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

06/18/20

X

ԱՐԹՈՒՐ ՄԽԻԹԱՐՅԱՆ

Ա.ՄԽԻԹԱՐՅԱՆ